«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

2 դեկտեմբերի, 2025 թ. N 32 -L

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՄԲ ՊԼԱՆԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, ՀՀ ֆինանսների նախարարի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» 07.10.2022թ N 420-Ն հրամանը, ինչպես նաև «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.17.21 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության կողմից ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ պլանային արտաքին գնահատման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության ընթացակարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2025 թ. դեկտեմբերի 2-ի N 32 - Լ որոշման

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ
ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՄԲ ՊԼԱՆԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն ընթացակարգը (այսուհետ՝ «Ընթացակարգ») սահմանում է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակեպության (այսուհետ՝ Պալատ) կողմից ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ պլանային արտաքին գնահատման իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության գործընթացը և դրա շրջանակներում իրավասու սուբյեկտների գործառույթները:

1.2. Ընթացակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» N 420-Ն հրամանի (այսուհետ նաև՝ «Հրաման») դրույթները:

1.3. Սույն Ընթացակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում և մեկնաբանվում են նույն կերպ, ինչպես Հրամանում, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում և Պալատի կանոնադրությամբ:

2. Ռիսկերի վրա հիմնված պլանային արտաքին գնահատման ընդհանուր նկարագիր

2.1. Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը ներառում է արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպության ընտրություն՝ հիմնված կազմակերպության կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հետ կապված ռիսկերի գործոնների վերլուծության վրա:

2.2. Աուդիտորական կազմակերպությունում պլանային արտաքին գնահատումները (այդ թվում՝ Ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ) պետք է իրականացվեն ոչ հաճախ, քան տարին մեկ, և ոչ ուշ, քան երեք տարին մեկ:

3. Ռիսկերի վրա հիմնված պլանային արտաքին գնահատման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ռիսկային պրոֆիլի գնահատումը

3.1. Պալատի գործադիր մարմնի ղեկավարը ռիսկերի վրա հիմնված արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ռիսկային պրոֆիլի գնահատման գործընթացը իրականացնում է ընթացիկ տարվա երկրորդ կիսամյակում:

3.2. Աուդիտորական կազմակերպությունների ռիսկային պրոֆիլի գնահատման գործընթացը ներառում է.

1) Տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,
2) Ռիսկերի գործոնների գնահատում՝ համաձայն սույն Կարգի հավելված 1-ով սահմանված մեթոդաբանության (այսուհետ՝ Մեթոդաբանություն),
3) Կազմակերպությունների ռիսկային պրոֆիլի գնահատում՝ համաձայն Մոթոդաբանությամբ սահմանված կշիռների,

4) Կազմակերպությունների ցանկի կազմում:

4. Տեղեկատվության հավաքագրում

4.1. Տեղեկատվության հավաքագրման փուլը ենթադրում է Պալատի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում հետևյալ աղբյուրներից.

4.1.1. Պալատի ներքին տվյալների բազաներ,

4.1.2. Աուդիտորական կազմակերպությունների տարեկան հաշվետվություններ և ներկայացված այլ տեղեկատվություն,

4.1.3. Նախորդ տարիների արտաքին գնահատումների արդյունքներ,

4.1.4. Բողոքներ, հաղորդումներ և հանրային հասանելի տվյալներ,

4.1.5. Պալատին հասանելի այլ աղբյուրներ:

4.2. Տեղեկատվության հավաքագրման և վերլուծությունների համար ընտրվող ժամանակաշրջանը կարող է ընդգրկել առավելագույնը նախորդող երեք տարիները:

5. Ռիսկերի գործոնների գնահատում

5.1. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով կիրառվում են հետևյալ ռիսկերի գործոնները.

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող և խոշոր կազմակերպություններում իրականացված աուդիտների քանակը,

2) իրականացված աուդիտների ընդհանուր քանակը,

3) Նախորդ արտաքին գնահատումների արդյունքները,

4) իրականացված աուդիտների քանակի աճը,

5) իրականացված աուդիտների քանակի և աուդիտորական կազմակերպությունում աշխատող աուդիտորների թվաքանակի հարաբերակցության աճը,

6) իրականացված աուդիտների քանակի և աուդիտորական կազմակերպության բոլոր աշխատակիցների թվաքանակի հարաբերակցությունը,

7) նախորդ տարվա համեմատությամբ իրականացված աուդիտի քանակի աճի տեմպի նշանակալի գերազանցումը աուդիտորական ծառայությունների մատուցումից ստացված հասույթների աճի տեմպի նկատմամբ,

8) աուդիտորական կազմակերպության ղեկավարության հաճախակի փոփոխությունը,

9) աուդիտորական կազմակերպության անձնակազմի բարձր հոսունությունը,

10) աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական ծառայությունների մատուցումը տնտեսության այն ճյուղերի կազմակերպություններին, որտեղ աուդիտորական կազմակերպությունը նախկինում աուդիտորական ծառայությունների մատուցման փորձ չի ունեցել,

11) վերջին տասներկու ամիսների ընթացքում աուդիտորական կազմակերպության կողմից թույլ տրված հնարավոր խախտումների վերաբերյալ բողոքների և այլ տեղեկատվության առկայությունը,

12) աուդիտորների տեղափոխությունը այլ աուդիտորական կազմակերպություն՝ որպես պայման ապահովող աուդիտոր,

13) Պալատին ներկայացվող հաշվետվությունների ուշացման կամ ճշգրտման դեպքերը,

14) աուդիտորական առաջադրանքի միջին արժեքը,

15) աուդիտի ծրագրային ապահովվածության առկայությունը:

5.2. Ընտրված բոլոր գործոնները նախապես գնահատվում են, այնուհետև, կիրառելով յուրաքանչյուր գործոնի համար սահմանված կշիռը, հաշվարկվում է յուրաքանչյուր աուդիտորական կազմակերպության ռիսկային պրոֆիլի գնահատականը՝ համաձայն Մեթոդաբանության (Հավելված 1):

6. Արտաքին գնահատման ցանկի և ժամանակացույցի վերաբերյալ առաջարկի ներկայացում

6.1. Ռիսկերի վերլուծության արդյունքների և կազմակերպությունների ռիսկային պորտֆելների ցանկերի հիման վրա Պալատի գործադիր մարմնի ղեկավարը կազմում է տարեկան պլանային արտաքին գնահատումների նախնական ժամանակացույց՝ հաշվի առնելով Պալատի՝ ռեսուրսներով (աշխատանքային, նյութական և ֆինանսական) ապահովվածության աստիճանը, արտաքին գնահատումների ակնկալվող տևողությունը և աշխատանքային խմբի անդամների ծանրաբեռնվածությունը:

6.2. Նախնական ժամանակացույցը ներառում է արտաքին գնահատման ենթակա կազմակերպության անվանումը, վերջինիս ՀԳԳՀ-ն և արտաքին գնահատման ակնկալվող ժամանակահատվածը:

6.3. Աուդիտորական կազմակերպությունների ռիսկային պրոֆիլների նախնական ցանկը և պլանային արտաքին գնահատումների նախնական ժամանակացույցը Պալատի գործադիր մարմնի ղեկավարը Պալատի խորհրդին է ներկայացնում ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը:

7. Աուդիտորական կազմակերպությունների ընտրություն

7.1 Պալատի խորհուրդը առաջիկա տարվա ընթացքում արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների վերջնական ցանկը և տարեկան ժամանակացույցը հաստատում է և այն ներկայացնում Հանրային վերահսկողության խորհրդի համաձայնեցմանը՝ մինչև այդ տարվան նախորդող

տարվա դեկտեմբերի 1-ը:

7.2 Հանրային վերահսկողության խորհրդի կողմից համաձայնություն ստանալուց հետո Պալատի գործադիր մարմնի ղեկավարը առաջիկա տարվա ընթացքում արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը և ժամանակացույցը հրապարակում է Պալատի պաշտոնական կայքում ոչ ուշ, քան արտաքին գնահատման տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը:

8. Անցումային դրույթներ

8.1 Աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հետ կապված ռիսկերի գնահատման մասին տեղեկատվությունը գաղտնի է, և հրապարակման դեպքում կիրառվում են աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

8.2 Սույն Ընթացակարգի կիրարկումն ապահովում է Պալատի գործադիր մարմնի ղեկավարը:

8.3 Սույն Ընթացակարգի և Հրամանի կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասություն առաջանալու և/կամ այդ իրավական ակտերում փոփոխություն կատարվելու պարագայում առաջնությունը տրվում է վերջինին:

Հավելված 1

Ռիսկերի վրա հիմնված պլանային արտաքին գնահատման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության մեթոդաբանություն

1. Պլանային արտաքին գնահատման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով կիրառվող ռիսկերի գործոնների գնահատումն իրականացվում է 5 բալանոց համակարգով՝ հետևյալ չափանիշներով.

հ/հ	**Ցուցանիշ**	**Ցուցանիշի նկարագրություն**	**Գնահատական**
1	Հանրային հետաքրքրություն ներկայացնող և խոշոր կազմակերպություններում տարեկան իրականացված աուդիտների քանակը	Այս ցուցանիշը ոչ թե աուդիտորական կազմակերպության կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող և խոշոր կազմակերպություններում իրականացված աուդիտների քանակի բացարձակ մեծությունն է, այլ նշված աուդիտների թվի հարաբերակցությունն է իրականացված բոլոր աուդիտների թվին՝ արտահայտված տոկոսներով: Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների համար՝ որպես կշռված միջին մեծություն՝ կիրառելով հետևյալ կշիռները. առաջին տարի – 15% երկրորդ տարի – 20% երրորդ (նախորդ տարի) – 65% Եթե առկա են տվյալներ երեքից պակաս տարիների համար, ապա կիրառվում են հետևյալ կշիռները. Երկու տարվա դեպքում. առաջին տարի – 30% երկրորդ (նախորդ տարի) – 70% Մեկ տարվա դեպքում՝ 100%	50-100% - 5 30-50% - 4 20-30% - 3 10-20% - 2 մինչև 10% - 1
2	Տարեկան իրականացված աուդիտների ընդհանուր քանակը	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների համար՝ որպես կշռված միջին մեծություն՝ կիրառելով հետևյալ կշիռները. առաջին տարի – 15% երկրորդ տարի – 20% երրորդ (նախորդ տարի) – 65% Եթե առկա են տվյալներ երեքից պակաս տարիների համար, ապա կիրառվում են հետևյալ կշիռները. Երկու տարվա դեպքում. առաջին տարի – 30% երկրորդ (նախորդ տարի)– 70% Մեկ տարվա դեպքում՝ 100%	100 ավել - 5 70-100 - 4 40 – 70 - 3 10-40 - 2 Մինչև 10 - 1
3	Նախորդ արտաքին գնահատումների արդյունքները	Վերցվում են վերջին արտաքին գնահատման արդյունքներով տրված գնահատականները:	5,6 - 5 4 - 4 3 - 3 2 - 2 1 - 1

4	Իրականացված աուդիտների քանակի աճը	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին հաշվետու տարվա և դրան նախորդող տարվա համապատասխան ցուցանիշների հարաբերակցությամբ՝ տոկոսային արտահայտությամբ:	20% ավել - 5 15-20% - 4 10-15% - 3 5-10% - 2 մինչև 5% - 1
5	Իրականացված աուդիտների քանակի և աուդիտորական կազմակերպությու նում աշխատող աուդիտորների թվաքանակի հարաբերակցութ յան աճը	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին հաշվետու տարվա և դրան նախորդող տարվա համապատասխան ցուցանիշների հարաբերակցությամբ՝ տոկոսային արտահայտությամբ:	20% ավել - 5 15-20% - 4 10-15% - 3 5-10% - 2 մինչև 5% - 1
6	Իրականացված աուդիտների քանակի և աուդիտորական կազմակերպությա ն բոլոր աշխատակիցներ ի թվաքանակի հարաբերակցու թյունը	Ցուցանիշը հաշվարկվում է որպես կազմակերպության կողմից իրականացված բոլոր աուդիտների քանակի և կազմակերպության բոլոր աշխատակիցների թվաքանակի հարաբերակցություն: Ցուցանիշը հաշվարկվում է նախորդ հաշվետու տարվա տվյալներով: Հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով. Նախ յուրաքանչյուր կազմակերպության համար հաշվարկվում է այս ցուցանիշը, այնուհետև կազմվում է ցանկ՝ ցուցանիշի նվազման կարգով: Այնուհետև, ըստ ստացված ցուցակում զբաղեցրած տեղերի, կազմակերպությունները գնահատվում են հետևյալ ձևով՝ առաջին 20%-ը - 5 երկրորդ 20%-ը - 4 երրորդ 20%-ը - 3 չորրորդ 20%-ը - 2 Մնացածը - 1 Ցանկի 20% կազմող կազմակերպությունների թիվը որոշելիս քանակը վերցվում է միայն ամբողջ թվերով, տասնորդական նիշերը հաշվի չեն առնվում:	
7	Նախորդ տարվա համեմատությամ բ իրականացված աուդիտի քանակի աճի տեմպի նշանակալի գերազանցումը աուդիտորական ծառայություննե րի մատուցումից ստացված	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին հաշվետու տարվա և դրան նախորդող տարվա համապատասխան ցուցանիշների տարբերությամբ՝ տոկոսային կետերով: Տարբերությունը բացասական ստացվելու դեպքում գնահատականը համարվում է 1:	20 և ավել - 5 15-20 - 4 10-15 - 3 5-10 - 2 մինչև 5 - 1

	հասույթների աճի տեմպի նկատմամբ		
8	Աուդիտորական կազմակերպության ղեկավարության հաճախակի փոփոխությունը	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք (կամ ավելի պակաս՝ եթե կազմակերպությունն ավելի ուշ է ստեղծվել) տարիների ընթացքում կատարված փոփոխությունների թվով:	3 ավել - 5 3 - 4 2 - 3 1 - 2 0 - 1
9	Աուդիտորական կազմակերպության անձնակազմի բարձր հոսունությունը	Հոսունության ցուցանիշը հաշվարկվում է որպես տարվա ընթացքում դուրս եկած աշխատակիցների թվի հարաբերություն աշխատակիցների միջին ցուցակային թվին (տարեսկզբի դրությամբ աշխատակիցների թվի և տարեվերջի դրությամբ աշխատակիցների թվի թվաբանական միջինին)՝ տոկոսային արտահայտությամբ: Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների համար՝ որպես կշռված միջին մեծություն՝ կիրառելով հետևյալ կշիռները. առաջին տարի – 15% երկրորդ տարի – 20% երրորդ (նախորդ տարի) – 65% Եթե առկա են տվյալներ երեքից պակաս տարիների համար, ապա կիրառվում են հետևյալ կշիռները. Երկու տարվա դեպքում. առաջին տարի – 30% երկրորդ (նախորդ տարի) – 70% Մեկ տարվա դեպքում՝ 100%	20% ավել - 5 15-20% - 4 10-15% - 3 5-10% - 2 մինչև 5% - 1
10	Աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական ծառայությունների մատուցումը տնտեսության այն ճյուղերի կազմակերպություններին, որտեղ աուդիտորական կազմակերպությունը նախկինում աուդիտորական ծառայությունների մատուցման փորձ չի ունեցել	Ցուցանիշը հաշվարկվում է տվյալ տարում նախորդ տարվա համեմատությամբ նոր ճյուղեր ներկայացնող կազմակերպությունների ավելացման թվով: Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների համար՝ որպես կշռված միջին մեծություն՝ կիրառելով հետևյալ կշիռները. առաջին տարի – 15% երկրորդ տարի – 20% երրորդ (նախորդ տարի) – 65% Եթե առկա են տվյալներ երեքից պակաս տարիների համար, ապա կիրառվում են հետևյալ կշիռները. Երկու տարվա դեպքում. առաջին տարի – 30% երկրորդ (նախորդ տարի) – 70% Մեկ տարվա դեպքում՝ 100%	8 ավել - 5 7-8 - 4 5-6 - 3 3-4 - 2 0- 2 - 1

11	Վերջին տասներկու ամիսների ընթացքում աուդիտորական կազմակերպության կողմից թույլ տրված հնարավոր խախտումների վերաբերյալ բողոքների և այլ տեղեկատվության առկայությունը	Ցուցանիշը հաշվարկվում է ռիսկերի գնահատման ամսվան նախորդող վերջին տասներկու ամիսների ընթացքում աուդիտորական կազմակերպության կողմից թույլ տրված հնարավոր խախտումների վերաբերյալ բողոքների և այլ տեղեկատվության թվով:	3 ավել - 5 3 - 4 2 - 3 1 - 2 0 - 1
12	Աուդիտորների տեղափոխությունը այլ աուդիտորական կազմակերպություն՝ որպես պայման ապահովող աուդիտոր	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների ընթացքում այլ աուդիտորական կազմակերպությունում պայման ապահովող աուդիտորի կողմից նոր աուդիտորական կազմակերպությունում որպես պայման ապահովող աուդիտորներ գրանցվելու դեպքերի թվով:	3 ավել - 5 3 - 4 2 - 3 1 - 2 0 - 1
13	Պալատին ներկայացվող հաշվետվությունների ուշացման կամ ճշգրտման դեպքերը	Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների ընթացքում աուդիտորական կազմակերպությունների կողմից Պալատին ներկայացվող հաշվետվությունների՝ ժամկետից ուշացման կամ դրանցում ներկայացումից հետո կատարված ճշգրտումների թվով: Ցուցանիշը հաշվարկվում է վերջին երեք տարիների համար՝ որպես կշռված միջին մեծություն՝ կիրառելով հետևյալ կշիռները. առաջին տարի – 15% երկրորդ տարի – 20% երրորդ (նախորդ տարի) – 65% Եթե առկա են տվյալներ երեքից պակաս տարիների համար, ապա կիրառվում են հետևյալ կշիռները. Երկու տարվա դեպքում. առաջին տարի – 30% երկրորդ (նախորդ տարի)– 70% Մեկ տարվա դեպքում՝ 100%	5 ավել - 5 3 - 4 2 - 3 1 - 2 0 - 1

<table>
<tr>
<td>14</td>
<td>Աուդիտորական առաջադրանքի միջին արժեքը</td>
<td>Ցուցանիշը հաշվարկվում է որպես կազմակերպություններին մատուցված աուդիտորական ծառայություններից ստացված հասույթի մեծության և իրականացված աուդիտների թվի հարաբերակցություն:

Ցուցանիշի հաշվարկման համար վերցվում են հետևյալ խմբերը՝
Ընդհանուր նշանակության հաշվետվությունների պարտադիր աուդիտի գծով՝
բանկեր, հանրային հետաքրքրություն ներկայացնող այլ կազմակերպություններ, խոշոր կազմակերպություններ,միջին կազմակերպություններ:
Ընդհանուր նշանակության հաշվետվությունների կամավոր աուդիտի գծով՝
առևտրային կազմակերպություններ, ոչ առևտրային կազմակերպություններ:
Հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով.
Նախ յուրաքանչյուր կազմակերպության համար ըստ խմբերի.հաշվարկվում է այս ցուցանիշը, այնուհետև կազմվում է յուրաքանչյուր խմբի համար առանձին ցանկ՝ արժեքների աճման կարգով (ցածր արժեքից դեպի բարձր):
Այնուհետև յուրաքանչյուր խմբի գծով, ըստ այդ ցուցակում զբաղեցրած տեղերի, կազմակերպությունները գնահատվում են հետևյալ ձևով՝

առաջին 20%-ը - 5
երկրորդ 20%-ը - 4
երրորդ 20%-ը - 3
չորրորդ 20%-ը - 2
Մնացածը - 1
Ցանկի 20% կազմող կազմակերպությունների թիվը վերցվում է միայն ամբողջ թվերով:

Այն կազմակերպությունները, որոնք տվյալ խմբի գծով աուդիտ չեն իրականացրել և չեն ներառվել այս խմբի ցանկում, տվյալ խմբի գծով գնահատվում են 2:

Այնուհետև, կիրառելով ստորև նշված կշիռների համակարգը, դուրս է բերվում մեկ աուդիտի արժեք, գործոնի գծով վերջնական գնահատականը

<table>
<tr><td>h/h</td><td></td><td>Ենթախմբի կշիռը</td><td>Խմբի կշիռը</td></tr>
<tr><td colspan="4">Պարտադիր աուդիտ</td></tr>
<tr><td>1</td><td>Բանկեր</td><td>30</td><td></td></tr>
</table>
</td>
<td></td>
</tr>
</table>

		2	Հանր.հետաքրքր. այլ կազմ.	30			
		3	Խոշոր կազմակերպ.	20			
		4	Միջին կազմակերպ.	20			
			Ընդամենը	**100**	60		
		Կամավոր աուդիտ					
		1	Առևտրային կազմ. ընդհ. նշան. հաշվ. աուդիտ	60			
		2	Ոչ առևտրային կազմ. ընդհ. նշան. հաշվ. աուդիտ	40			
			Ընդամենը	**100**	40		
			Ամբողջը		100		
15	Աուդիտի ծրագրային ապահովվածության առկայությունը	Ցուցանիշը որոշվում է աուդիտի ծրագրային ապահովվածության առկայությամբ կամ բացակայությամբ:				առկա չէ - 5 առկա է - 1	

Նշված 15 ցուցանիշներից որևէ մեկի գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության դեպքում (պայմանավորված տվյալ տարում գրանցման, նախորդ տարիների համադրելի տվյալների բացակայության կամ որևէ այլ հանգամանքով) այդ ցուցանիշի գծով գնահատականը համարվում է 2:

2. Գործոնների գնահատման արդյունքում ստացված գնահատականների նկատմամբ կիրառվում են հետևյալ կշիռները՝ տոկոսներով.

հ/հ	**Ռիսկային գործոն**	**Կշիռ**
1	Հանրային հետաքրքրություն ներկայացնող և խոշոր կազմակերպություններում իրականացված աուդիտների քանակը	12
2	Իրականացված աուդիտների ընդհանուր քանակը	2
3	Նախորդ արտաքին գնահատումների արդյունքները	18
4	Իրականացված աուդիտների քանակի աճը	2
5	Իրականացված աուդիտների քանակի և աուդիտորական կազմակերպությունում աշխատող աուդիտորների թվաքանակի հարաբերակցության աճը	5
6	Իրականացված աուդիտների քանակի և աուդիտորական կազմակերպության բոլոր աշխատակիցների թվաքանակի հարաբերակցությունը	10
7	Նախորդ տարվա համեմատությամբ իրականացված աուդիտի քանակի աճի տեմպի նշանակալի գերազանցումը աուդիտորական ծառայությունների մատուցումից ստացված հասույթների աճի տեմպի նկատմամբ	2
8	Աուդիտորական կազմակերպության ղեկավարության հաճախակի փոփոխությունը	2

9	Աուդիտորական կազմակերպության անձնակազմի բարձր հոսունությունը	2
10	Աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական ծառայությունների մատուցումը տնտեսության այն ճյուղերի կազմակերպություններին, որտեղ աուդիտորական կազմակերպությունը նախկինում աուդիտորական ծառայությունների մատուցման փորձ չի ունեցել	2
11	Վերջին տասներկու ամիսների ընթացքում աուդիտորական կազմակերպության կողմից թույլ տրված հնարավոր խախտումների վերաբերյալ բողոքների և այլ տեղեկատվության առկայությունը	10
12	Աուդիտորների տեղափոխությունը այլ աուդիտորական կազմակերպություն՝ որպես պայման ապահովող աուդիտոր	6
13	Պալատին ներկայացվող հաշվետվությունների ուշացման կամ ճշգրտման դեպքերը	5
14	Աուդիտորական առաջադրանքի միջին արժեքը	20
15	Աուդիտի ծրագրային ապահովվածության առկայությունը	2
Ընդամենը		100

3. Ստացված գնահատականների հիման վրա կազմվում է աուդիտորական կազմակերպությունների ցանկը՝ գնահատականների նվազման կարգով՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ պլանային արտաքին գնահատման իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով: